

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

(օրենքը խմբ. 10.12.21 ՀՕ-419-Ն)

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 4. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **գնահատող՝** ֆիզիկական անձ, որն ունի գնահատողի որակավորման գործող վկայական և հաշվառված է լիազոր մարմնի կողմից.

2) **գնահատման կազմակերպություն՝** գնահատման գործունեություն իրականացնող կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր, որը սույն օրենքով սահմանված կարգով հաշվառված է լիազոր մարմնի կողմից.

~~3) **լիազոր մարմին՝** սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատման գործունեության ոլորտը կարգավորող և վերահսկող, ֆիզիկական անձանց գնահատման մասնագիտական որակավորում (այսուհետ՝ Որակավորում) իրականացնող և որակավորման վկայականի գործողությունը դադարեցնող, գնահատման գործունեություն իրականացնելու նպատակով գնահատողներին, կազմակերպություններին, անհատ ձեռնարկատերերին, ինչպես նաև գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություններին հաշվառող և հաշվառումից հանող լիազոր մարմին.~~

3) **լիազոր մարմին՝** սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատման գործունեության ոլորտը կարգավորող և վերահսկող, ֆիզիկական անձանց գնահատման մասնագիտական որակավորում (այսուհետ՝ Որակավորում) իրականացնող, որակավորման վկայականի գործողությունը կասեցնող և դադարեցնող, գնահատման գործունեություն իրականացնելու նպատակով գնահատողներին (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող), գնահատման կազմակերպություններին, ինչպես նաև գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություններին հաշվառող և հաշվառումից հանող լիազոր մարմին.

4) **գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություն՝** ոչ առևտրային, անկախ, մասնագիտացված, ինքնակարգավորվող և ինքնաֆինանսավորվող

կազմակերպություն, որը գնահատողների մասնագիտացված միություն է և ստեղծված է գնահատողների և գնահատման կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի դրսևորման ու պաշտպանության, նրանց գործնական ու մեթոդական օգնություն ցուցաբերելու և սույն օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնելու համար.

5) **գնահատման ստանդարտ՝** Կառավարության սահմանած, գնահատման միջազգային ստանդարտներին համահունչ, գնահատումը կանոնակարգող, համընդհանուր և բազմակի կիրառման համար կանոններ, ցուցումներ պարունակող փաստաթուղթ.

6) **գնահատում՝** գնահատման օբյեկտի արժեքի ~~որոշմանը—վերաբերյալ մասնագիտական կարծիքի ձևավորմանը~~ նպատակաուղղված՝ սույն օրենքով, գնահատման ստանդարտներով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված գնահատման գործողությունների ամբողջությունն է.

7) **գնահատման հաշվետվություն՝** փաստաթուղթ, որը պարունակում է ~~տեղեկություն—տվյալների վերլուծության վրա հիմնված մասնագիտական կարծիք~~ սույն օրենքով, գնահատման ստանդարտներով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատվիրված ամսաթվի դրությամբ որոշված գնահատման օբյեկտի արժեքի վերաբերյալ.

~~8) **գնահատման առաջադրանք՝** պատվիրատուի կողմից գնահատողին ներկայացվող առաջադրանք, որում արտացոլվում են գնահատվող օբյեկտի նույնականացման տվյալները, գնահատման նպատակով ներկայացված փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև գնահատման նպատակը, գնահատման գործառույթը և գնահատվող օբյեկտի նկատմամբ իրավունքների տեսակը.~~

~~8) **գնահատման առաջադրանք՝** պատվիրատուի կողմից գնահատողին ներկայացվող առաջադրանք, որում արտացոլվում են գնահատվող օբյեկտի նույնականացման տվյալները, գնահատման նպատակով ներկայացված փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև գնահատման արժեքի տեսակը, գնահատման նպատակը, և գնահատվող օբյեկտի նկատմամբ իրավունքների տեսակը.~~

9) **որակավորման հանձնաժողով՝** Հայաստանի Հանրապետության տարածքում գնահատման գործունեության ոլորտում մասնագիտական որակավորման քննություններն անցկացնող, այդ թվում՝ որակավորման քննությունների հարցաշարերը, առաջադրվող հարցերը և խնդիրները կազմող հանձնաժողով.

10) **մասնագիտական հանձնաժողով՝** Հայաստանի Հանրապետության տարածքում գնահատման գործունեության ուսումնասիրություն իրականացնող, գնահատման կազմակերպության և գնահատողների կողմից սույն օրենքի, այլ նորմատիվ իրավական ակտերի, գնահատման ստանդարտների ու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգերի պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող և գնահատման հաշվետվությունների վերաբերյալ մասնագիտական եզրակացություն տրամադրող հանձնաժողով.

~~11) գնահատման հաշվետվությունների հաշվառման ծրագիր՝ լիազոր մարմնի ներդրած առցանց աշխատող էլեկտրոնային տեղեկատվական համակարգ (այսուհետ՝ Հաշվառման ծրագիր), որտեղ մուտքագրվում են սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված գնահատման պարտադիր դեպքերում կազմված անշարժ գույքի գնահատման հաշվետվությունների վերաբերյալ տվյալները:~~

11) գնահատման հաշվետվությունների հաշվառման ծրագիր՝ լիազոր մարմնի ներդրած առցանց աշխատող էլեկտրոնային տեղեկատվական համակարգ (այսուհետ՝ Հաշվառման ծրագիր), որտեղ մուտքագրվում են անշարժ գույքի գնահատման հաշվետվությունների վերաբերյալ սույն օրենքով սահմանված տվյալները, իսկ սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված գնահատման պարտադիր դեպքերում՝ նաև գնահատման հաշվետվությունները:

12) **պատվիրատու՝** գնահատման աշխատանքներ պատվիրող քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտ:

13) **շահառու՝** պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, որոնք հանդիսանում են գնահատման արդյունքների օգտագործողներ, կամ գնահատման արդյունքները որևէ կերպ առնչվում են իրենց օրինական շահերին:

18) **հաշվառում՝** լիազոր մարմնի կողմից որակավորված անձանց, իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերին, ինչպես նաև գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություններին սույն օրենքով սահմանված դիմումի և փաստաթղթերի հիմքով Հաշվառման ծրագրում ներառելը և սույն օրենքով սահմանված պահանջների ապահովման դեպքում Հաշվառման ծրագիրը կիրառելու նպատակով հասանելիություն տրամադրելը:

Հոդված 8. Հաշվառման ծրագրի կիրառումը

1. Հաշվառման ծրագիր մուտք գործելու համար նախատեսված մուտքանունը և գաղտնաբառը գնահատման կազմակերպության ղեկավարին ու գնահատողին տրամադրում է լիազոր մարմինը: Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հաշվառման ծրագիր մուտք են գործում «Ես եմ» ազգային նույնականացման հարթակի միջոցով:

1.1. Գնահատողի կողմից սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պայմանագիրը կնքելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հաշվառման ծրագիր պարտադիր ենթակա են մուտքագրման այդ պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող գնահատման առաջադրանքը, գնահատման նպատակը և գնահատման ենթակա օբյեկտի հասցեն, որի վերաբերյալ համակարգը գեներացնում է համապատասխան քաղվածք: Սույն մասով սահմանված պայմանագրի հիման վրա գնահատման հաշվետվություն կազմելուց հետո գնահատողի կողմից Հաշվառման ծրագիր պարտադիր ենթակա են մուտքագրման իր կազմած յուրաքանչյուր գնահատման հաշվետվության վերաբերյալ հետևյալ տվյալները՝

1) գնահատված օբյեկտի հասցեն.

2) գնահատման նպատակը, պայմանագրի անբաժանելի հավելվածը, գնահատման առաջադրանքը.

3) գնահատման ամսաթիվը.

4) գնահատված արժեքը.

5) գնահատված օբյեկտի վերաբերյալ առկա այն սահմանափակումները, որոնք ազդել են արժեքի որոշման վրա.

6) գնահատված օբյեկտի տեղագնության արձանագրությունը:

2. Յուրաքանչյուր գնահատման առաջադրանք կամ հաշվետվություն, որի տվյալները մուտքագրվում են Հաշվառման ծրագիր, ինքնաշխատ ձևավորվում է հաշվետվությունը նույնականացնող անհատական ծածկագիր: Հաշվառման ծրագրում հաշվետվության տվյալների մուտքագրումը փաստում է հաշվետվության գոյության մասին: Հաշվետվության վերաբերյալ տվյալները Հաշվառման ծրագիր մուտքագրված չլինելու դեպքում տվյալ հաշվետվությունը չի կարող օգտագործվել որպես գնահատման հաշվետվություն:

3. Հաշվառման ծրագիր մուտքագրվող տվյալները չպետք է պարունակեն օրենքով պահպանվող գաղտնիք հանդիսացող տեղեկատվություն:

4. Հաշվառման ծրագրի վարման կարգը և մուտքագրվող տվյալների ցանկը սահմանում է լիազոր մարմնի ղեկավարը:

5. Սույն օրենքով սահմանված կարգով վկայականի կասեցման դեպքում գնահատողին կարող է տրամադրվել Հաշվառման ծրագրի կիրառման սահմանափակ հասանելիություն՝ բացառապես այն դեպքում, երբ Հաշվառման ծրագրում առկա է գնահատողի կողմից մուտքագրված ընթացիկ գնահատման առաջադրանք, որի կապակցությամբ պատվիրատուն սույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով սահմանված կարգով պահանջել է շարունակել պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը:

Հոդված 11. Պայմանագրի էական պայմանները

1. Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Գնահատման առաջադրանքը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի հավելվածը:

2. Պայմանագիրը պետք է պարունակի պարտադիր տեղեկություններ՝

1) գնահատվող օբյեկտի անվանման և նույնականացման վերաբերյալ.

~~2) գնահատման դիմաց վճարի չափի վերաբերյալ.~~

2) գնահատման դիմաց վճարի չափի, ինչպես նաև գնահատման հաշվետվության կազմման համար անհրաժեշտ տեղեկությունների, փաստաթղթերի ձեռքբերման պետական տուրքի և այլ վճարների չափի վերաբերյալ, որը չի ներառվում գնահատման դիմաց վճարի գումարի մեջ, ըստ անհրաժեշտ տեղեկությունների և փաստաթղթերի ձեռքբերման դիմաց վճարման ենթակա պետական տուրքի և այլ

վճարների չափի փոփոխության, կարող է փոփոխվել և ենթակա է վճարման պատվիրատուի կողմից.

3) գնահատման ստանդարտներով սահմանված և գնահատմամբ որոշվող արժեքի տեսակի, գնահատման ամսաթվի և տարեթվի վերաբերյալ.

4) գնահատման առաջադրանքի վերաբերյալ:

4) պատվիրատուին ուղղված ծանուցում՝ սույն օրենքի համաձայն պայմանագրի կնքման հիմքով պատվիրատուի անունից գնահատման համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու մասով գնահատողին լիազորություն ընձեռելու վերաբերյալ.

5) գնահատվող օբյեկտի վերաբերյալ պատվիրատուի կողմից տրամադրված տեղեկությունների և փաստաթղթերի ամբողջական ցանկի վերաբերյալ:

Հոդված 12. Գնահատողների, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հաշվառման և հաշվառումից հանելու կարգը

1. Անձը որպես գնահատող հաշվառվելու նպատակով լիազոր մարմին է ներկայացնում դիմում՝ կից ներկայացնելով գնահատողի որակավորման գործող վկայականի պատճենը, իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետությունում գործող գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության անդամությունը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ այն դեպքերի, երբ լիազոր մարմնում սահմանված կարգով որևէ գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություն հաշվառված չէ:

2. Իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը հաշվառվելու նպատակով լիազոր մարմին են ներկայացնում դիմում՝ կից ներկայացնելով իրավաբանական անձի պետական գրանցման համարը, անհատ ձեռնարկատեր հանդիսանալու դեպքում՝ պետական հաշվառման համարը, գնահատողի հետ կնքված աշխատանքային կամ ծառայությունների մատուցման պայմանագրի վերաբերյալ տեղեկանք, սույն օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ապահովագրության վկայագրի պատճենը, գնահատողի անձնագրի և որակավորման վկայականի պատճենը: Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի՝ հաշվառելու մասին դիմումները և կից փաստաթղթերը կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով, որոնց կարգը, ինչպես նաև գնահատողի հետ կնքված աշխատանքային պայմանագրի վերաբերյալ տեղեկանքի ձևը սահմանում է լիազոր մարմնի ղեկավարը:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դիմումները և դրանց կից փաստաթղթերը լիազոր մարմին մուտքագրվելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, լիազոր մարմինն ուսումնասիրում է դրանք և կայացնում որոշում՝ անձին, իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը հաշվառելու կամ հաշվառման դիմումը մերժելու վերաբերյալ:

Դիմումը և կից փաստաթղթերը վերադարձվում են, եթե ներկայացված փաստաթղթերը թերի են: Փաստաթղթերում առկա թերությունները վերացնելու համար լիազոր մարմինը տրամադրում է երեք աշխատանքային օր ժամկետ, որը հաշվարկվում է դիմողի կողմից փաստաթղթերն ստանալու օրվանից: Երեք աշխատանքային օրվա ընթացքում թերությունները վերացվելու և լիազոր մարմին կրկին ներկայացվելու դեպքում դիմումը համարվում է ներկայացված այն սկզբնապես ներկայացվելու օրը:

4. Անձին որպես գնահատող հաշվառելու դիմումը մերժվում է, եթե՝

1) ներկայացված փաստաթղթերը կամ տեղեկություններն ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված են.

2) անձը չունի գնահատողի գործող որակավորման վկայական.

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող անձը Հայաստանի Հանրապետությունում գործող գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության անդամ չէ:

5. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին որպես գնահատման կազմակերպություն հաշվառելու դիմումը մերժվում է, եթե՝

1) իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ներկայացրած փաստաթղթերն ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված են.

2) իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին.

3) դիմում ներկայացրած իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, օրենքի համաձայն, իրավունք չունի զբաղվելու գնահատման գործունեությամբ.

4) դիմում ներկայացրած կազմակերպությունը չի համապատասխանում սույն օրենքի 18-րդ հոդվածի պահանջներին:

6. Հաշվառում ստանալու դիմումը մերժելու վերաբերյալ որոշման մեջ հստակ պետք է նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը:

7. Հաշվառում ստանալու դիմումը մերժվելու դեպքում ֆիզիկական անձը, իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերն իրավունք ունի նոր դիմում ներկայացնելու՝ սույն հոդվածով սահմանված կարգով:

8. Լիազոր մարմնի որոշմամբ գնահատողը հանվում է հաշվառումից՝

1) իր դիմումի համաձայն.

2) որակավորման վկայականի գործողության դադարեցման դեպքում.

3) եթե, իր դիմումի համաձայն, դուրս է եկել գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունից և մեկամսյա ժամկետում չի դարձել Հայաստանի Հանրապետությունում գործող՝ գնահատողների որևէ ինքնակարգավորվող կազմակերպության անդամ.

4) եթե գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության անդամների քանակի առնվազն երկու երրորդի համաձայնությամբ վարքագծի կանոնների

խախտման հիմքով դադարեցվել է նրա անդամակցությունը գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությանը.÷

5) որակավորման վկայականի գործողության կասեցման դեպքում.

6) սույն օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետով նախատեսված պահանջը խախտելու դեպքում:

8.1. Գնահատողը հաշվառումից չի հանվում և շարունակում է զբաղվել գնահատման գործունեությամբ, եթե լիազոր մարմնում սահմանված կարգով որևէ գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություն հաշվառված չէ:

8.2. Սույն հոդվածի 8-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով հաշվառումից հանվելու դեպքում անձն իրավունք ունի նոր դիմում ներկայացնելու որպես գնահատող հաշվառում ստանալու համար միայն հաշվառումից հանվելուց վեց ամիս հետո, եթե հաշվառումից դուրս գալու դիմում ներկայացնելու պահին հանդիսացել է մասնագիտական կամ որակավորման հանձնաժողովի անդամ:

8.3. Սույն հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքով հաշվառումից հանվելու դեպքում անձն իրավունք ունի նոր դիմում ներկայացնելու որպես գնահատող հաշվառում ստանալու համար միայն սույն օրենքով նախատեսված հիմքերի վերացման դեպքերում:

8.4. Սույն հոդվածի 8-րդ մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով հաշվառումից հանվելու դեպքում գնահատողն իրավունք ունի հաշվառում ստանալու նոր դիմում ներկայացնելու միայն հիմքերի վերացումից հետո:

9. Սույն հոդվածի 8-րդ մասի 1-3-րդ կետերով նախատեսված հիմքերով հաշվառումից հանվելու դեպքերում անձն իրավունք ունի սույն հոդվածով սահմանված կարգով ներկայացնելու նոր դիմում՝ որպես գնահատող հաշվառում ստանալու համար:

10. Սույն հոդվածի 8-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով հաշվառումից հանվելու դեպքում անձն իրավունք ունի նոր դիմում ներկայացնելու որպես գնահատող հաշվառում ստանալու համար միայն հաշվառումից հանվելուց վեց ամիս հետո:

11. Լիազոր մարմնի որոշմամբ գնահատման կազմակերպությունը հանվում է հաշվառումից՝

1) սույն օրենքի 18-րդ հոդվածի պահանջները խախտելու դեպքում.

2) սույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները խախտելու դեպքում.

3) վերջին երեք տարում միևնույն գնահատման կազմակերպությունում աշխատող կամ աշխատած երեք և ավելի գնահատողների՝ սույն օրենքի 22-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին և 6-րդ 1-ին մասի 5-7-րդ կետերով նախատեսված հիմքերով որակավորման վկայականների դադարեցման դեպքում, եթե որակավորման վկայականի դադարեցման հիմքը գնահատողի՝ տվյալ գնահատման կազմակերպությունում աշխատած ժամանակահատվածում թույլ տրված խախտումներն են:

12. Սույն հոդվածի 11-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով հաշվառումից հանվելու դեպքում գնահատման կազմակերպությունն իրավունք ունի հաշվառում ստանալու նոր դիմում ներկայացնելու սույն օրենքի 18-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտումները վերացնելուց հետո:

13. Սույն հոդվածի 11-րդ մասի 2-րդ ~~և 3-րդ կետերով~~ նախատեսված ~~հիմքով~~ ~~հիմքերով~~ — հաշվառումից հանվելու դեպքում գնահատման կազմակերպությունն իրավունք ունի հաշվառում ստանալու նոր դիմում ներկայացնելու միայն հաշվառումից հանվելուց մեկ տարի հետո:

14. Սույն հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքերով հաշվառումից հանվելու դեպքում գնահատման կազմակերպությունն այլևս չի կարող հաշվառվել լիազոր մարմնում:

(12-րդ հոդվածը լրաց. 02.10.24 ՀՕ-363-Ն)

(02.10.24 ՀՕ-363-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 13. Գնահատման հաշվետվության վերաբերյալ պարտադիր պահանջները

1. Գնահատման արդյունքները ձևակերպվում են բացառապես էլեկտրոնային գրավոր փաստաթղթի տեսքով՝ գնահատման հաշվետվությամբ:

2. Հաշվետվության յուրաքանչյուր տպագրված և համարակալված էջ ստորագրում է գնահատողը:

3. Գնահատման հաշվետվությունը հաստատվում է գնահատողի ստորագրությամբ (անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում) կամ այն իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի ստորագրությամբ և կնիքով (առկայության դեպքում), որի հետ գնահատողը կնքել է աշխատանքային պայմանագիր, ինչպես նաև նշվում է էջերի քանակը:

2. Գնահատման հաշվետվությունը ստորագրում է գնահատողը՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

3. Գնահատման հաշվետվությունը հաստատվում է գնահատողի էլեկտրոնային ստորագրությամբ (անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում), իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ այն իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի էլեկտրոնային ստորագրությամբ, որի հետ գնահատողը կնքել է աշխատանքային կամ ծառայությունների մատուցման պայմանագիր, ինչպես նաև նշվում է էջերի քանակը:

4. Սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված գնահատման պարտադիր դեպքերում կազմված անշարժ Անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը պարտադիր պետք է պարունակի տեղեկություն Հաշվառման ծրագրի կողմից ձևավորված անհատական համարի վերաբերյալ, որը պետք է արտացոլված լինի գնահատման հաշվետվության բոլոր էջերի վրաաջ՝ ներքևի անկյունում:

5. Գնահատման հաշվետվությունում չի թույլատրվում՝

1) օգտագործել վավերականությունը չհաստատված աղբյուրներից ստացված տվյալներ, ներառել գնահատման չհիմնավորված մեկնաբանություններ և եզրակացություններ.

2) հրապարակել տեղեկություններ, որոնք, օրենքի համաձայն, համարվում են պետական, ծառայողական, առևտրային, բանկային և ապահովագրական գաղտնիք.

3) գնահատմամբ որոշված արժեքը չարտահայտել համարժեք դրամով:

6. Գնահատման հաշվետվության վերաբերյալ ընդհանուր պահանջները և դրանցում պարտադիր պարունակվող տեղեկությունները սահմանվում են գնահատման ստանդարտներով:

7. Սույն հոդվածի 1-4-րդ մասերից որևէ մեկի պահանջների խախտմամբ կազմված հաշվետվությունները, որպես գնահատման հաշվետվություն, օգտագործվել չեն կարող:

Հոդված 14. Գնահատման հաշվետվությունների ուսումնասիրությունը

1. Գնահատման հաշվետվության վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և գնահատման ստանդարտներին համապատասխանության խնդիրները կարող է պարզաբանել լիազոր մարմինը՝ նրան ուղղված գնահատման գործունեության սուբյեկտներից յուրաքանչյուրի կամ շահառուների դիմումի հիման վրա, կամ լիազոր մարմնի նախաձեռնությամբ, իսկ դրանց վերաբերյալ վեճերի առկայության դեպքում՝ դատական կարգով:

~~2. Գնահատման հաշվետվությունների ուսումնասիրության դեպքերը և կարգը սահմանում է Կառավարությունը:~~

Հոդված 16. Գնահատման կազմակերպության և գնահատողի իրավունքներն ու պարտականությունները

1. Գնահատողն իրավունք ունի՝

1) գնահատման ընթացքում գնահատման կազմակերպությունից և պատվիրատուներից պահանջելու անհրաժեշտ տեղեկությունների ապահովում, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական, ծառայողական, առևտրային, բանկային և ապահովագրական գաղտնիք համարվող տեղեկությունների, իսկ այդ տեղեկատվությամբ գույքի արժեքի արժանահավատությունը պայմանավորված լինելու դեպքում նշելու այդ մասին հաշվետվությունում.

1.1) գնահատման համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից՝ պատվիրատուի լիազորությամբ, հետևյալ եղանակներով՝

ա. էլեկտրոնային եղանակով՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների տվյալների շտեմարաններին հասանելիության ապահովման միջոցով՝ համապատասխան մարմնի հետ կնքված պայմանագրի հիման վրա.

բ. թղթային եղանակով՝ գրավոր հարցման հիման վրա.

2) օգտվելու սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված իրավունքներից.

3) օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից:

1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետի իմաստով գնահատողը համարվում է անհրաժեշտ տեղեկություններ ստանալու համար լիազորված պատվիրատուի կողմից գնահատման պատվերի վերաբերյալ պայմանագիրը կնքելու պահից: Ընդ որում, սույն մասով նշված լիազորությունն ուղղակիորեն պետք է ամրագրված լինի գնահատման պատվերի վերաբերյալ պայմանագրում: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների տվյալների շտեմարաններին գնահատողների հասանելիության կարգը սահմանում է Կառավարությունը:

2. Գնահատման կազմակերպությունն իրավունք ունի՝

1) գնահատման ընթացքում պատվիրատուից պահանջելու անհրաժեշտ տեղեկությունների ապահովում, բացառությամբ օրենքով սահմանված կարգով պետական, ծառայողական, առևտրային, բանկային և ապահովագրական գաղտնիք համարվող տեղեկությունների.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերելու գնահատման համար անհրաժեշտ ելակետային տվյալներ և այլ տեղեկություններ, այդ թվում՝ հարցում կատարելու երրորդ անձանցից՝ տեղեկատվություն ստանալու համար.

2.1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագրի հիման վրա ստանալու հասանելիություն համապատասխան մարմնի տվյալների շտեմարաններին.

3) անհրաժեշտության դեպքում պայմանագրային հիմունքներով գնահատմանը ներգրավելու այլ մասնագետ(ներ)ի.

4) մասնակցելու իր գործունեությանը վերաբերող հարցերի քննարկմանը և ծանոթանալու հարցերին առնչվող բոլոր փաստաթղթերին.

5) գնահատման իր գործունեության մասին լիազոր մարմնի ընդունած որոշումները բողոքարկելու դատական կարգով.

6) օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3. Գնահատողը պարտավոր է՝

1) գնահատումը կատարել սույն օրենքով, գնահատման ստանդարտներով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ~~կարգով.~~ բացառապես գնահատվող օբյեկտի տեղագննության հիման վրա: Տեղագննության

արդյունքների արձանագրման ճշգրտության և հիմնավորվածության համար պատասխանատվությունը կրում է գնահատողը: Եթե տեղագնություն իրականացնելիս որևէ կերպ խոչընդոտվել է անշարժ գույք մուտք գործելը, գնահատումն իրականացվում է Կառավարության սահմանած կարգով:

2) Հաշվառման ծրագրում մուտքագրել սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված գնահատման պարտադիր դեպքերում կազմված անշարժ գույքի գնահատման հաշվետվության հաշվետվությունները, ինչպես նաև սույն օրենքով սահմանված՝ Հաշվառման ծրագրում մուտքագրման ենթակա գնահատման հաշվետվությունների վերաբերյալ տվյալները:

3) սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված գնահատման պարտադիր դեպքերում կազմված անշարժ գույքի գնահատման հաշվետվության յուրաքանչյուր էջի աջ՝ ներքևի անկյունում, լրացնել Հաշվառման ծրագրի կողմից ձևավորված անհատական համարը:

4) ստորագրել հաշվետվության յուրաքանչյուր տպագրված և համարակալված էջ:

3) գնահատման հաշվետվության յուրաքանչյուր էջին լրացնել Հաշվառման ծրագրի կողմից ձևավորված անհատական համարը:

4) էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրել հաշվետվությունը:»

5) հրաժարվել գնահատման իրականացումից, եթե գնահատման օբյեկտի վերաբերյալ տեղեկատվությունը բավարար չէ սույն օրենքով և գնահատման ստանդարտներով սահմանված պարտադիր պահանջների պահպանմամբ գնահատման հաշվետվություն կազմելու համար:

5.1) հրաժարվել գնահատման իրականացումից շահերի բախման իրավիճակում, այդ թվում՝ եթե նույն գույքի վերաբերյալ նախկինում իրականացրել է գնահատում՝ հանդիսանալով այլ գնահատման կազմակերպության աշխատակից:

6) իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս պահպանել գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջները:

7) կրել սույն հոդվածի 4-րդ մասի 3-5-րդ կետերով սահմանված պարտականությունները:

8) չհանդիսանալ մեկից ավելի գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության անդամ:

9) սույն օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որակավորման հանձնաժողովի կամ 23-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված մասնագիտական հանձնաժողովի անդամ հանդիսանալու դեպքում ապահովել ներկայություն հանձնաժողովի նիստերին:»

11) լիազոր մարմնի պահանջով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել իր կողմից կազմված գնահատման հաշվետվությունները, գնահատման հաշվետվությունների ցանկը, ինչպես նաև վերահսկողություն իրականացնելու համար լիազոր մարմնի պահանջած՝ գնահատման ստանդարտներով սահմանված գնահատման աշխատանքի ընթացքում ձեռք բերված հիմնական, նախնական տվյալները, բոլոր հաշվարկները, հետազոտության և վերլուծության արդյունքները:

որոնց միջոցով կայացվել է արժեքի վերաբերյալ վերջնական եզրակացությունը: Երեք աշխատանքային օրվա ընթացքում պահանջված տեղեկատվությունը ներկայացնելու անհնարինության դեպքում պահանջի հասցեատերը պարտավոր է գրավոր դիմել լիազոր մարմին՝ հայտնելով կատարման անհնարինության մասին, նշելով անհնարինության պատճառները և հայցելով կատարման նոր ժամկետ:

12) սույն մասի 11-րդ կետով լիազոր մարմնի պահանջով ներկայացման ենթակա հաշվետվություններում, պահանջված տեղեկատվությունում, ինչպես նաև այլ փաստաթղթերում չներառել կեղծ կամ խեղաթյուրված տվյալներ:

4. Գնահատման կազմակերպությունը պարտավոր է՝

1) գնահատման գործունեություն իրականացնելուց առաջ սահմանված կարգով հաշվառվել լիազոր մարմնում:

2) գնահատման հաշվետվությունը հաստատել գնահատման կազմակերպության ղեկավարի էլեկտրոնային ստորագրությամբ ~~և կնիքով (առկայության դեպքում)~~, ապահովել պայմանագրով սահմանված պարտավորությունների պատշաճ կատարումը:

3) պահպանել պատվիրատուից և երրորդ անձանցից գնահատման ընթացքում ստացված փաստաթղթերը՝ հաշվետվությունների թղթային կամ էլեկտրոնային կրկնօրինակների հետ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետի ընթացքում:

4) ապահովել պատվիրատուներից և երրորդ անձանցից գնահատման ընթացքում ստացված տեղեկատվության գաղտնիությունը:

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում հաշվետվությունների պատճենները կամ դրանցում առկա գույքի արժեքի վերաբերյալ էլեկտրոնային կամ փաստաթղթային տեղեկատվությունը, պատվիրատուներից բացի, տրամադրել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան մարմիններին:

6) գնահատողի հետ աշխատանքային կամ ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, լիազոր մարմին ներկայացնել գնահատողի հետ կնքված ~~աշխատանքային~~ պայմանագրի վերաբերյալ տեղեկանք:

7) գնահատողի հետ աշխատանքային կամ ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, գրավոր տեղեկացնել լիազոր մարմնին:

8) հրաժարվել գնահատման իրականացումից, եթե գնահատման օբյեկտի վերաբերյալ տեղեկատվությունը բավարար չէ սույն օրենքով և գնահատման ստանդարտներով սահմանված պարտադիր պահանջների պահպանմամբ գնահատման հաշվետվություն կազմելու համար:

(16-րդ հոդվածը լրաց. 02.10.24 ՀՕ-363-Ն)

(02.10.24 ՀՕ-363-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 17. Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները

1. Պատվիրատուն իրավունք ունի՝

1) ինքնուրույն ընտրելու գնահատման կազմակերպությունը.

2) գնահատման կազմակերպության միջոցով գնահատողից պահանջելու ներկայացնել գնահատողի մասնագիտական որակավորման վկայականի բնօրինակը.

3) գնահատման հաշվետվության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և գնահատման ստանդարտներին համապատասխանության վերաբերյալ պարզաբանում ստանալու լիազոր մարմնում կամ վիճարկելու դատարանում.

4) գնահատման կազմակերպությունից պահանջելու պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարում.

4.1) գնահատողի վկայականի կասեցման դեպքում պահանջելու կատարել պայմանագրով ստանձնած պարտականությունները կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով միակողմանի հրաժարվելու պայմանագրից.

5) օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից:

2. Պատվիրատուն պարտավոր է՝

~~1) գնահատման կազմակերպությանը կամ գնահատողին տրամադրել գնահատման համար անհրաժեշտ փաստաթղթեր, հավաստի տեղեկություններ և անհրաժեշտության դեպքում նաև ներկայացնել պարզաբանումներ, ինչպես նաև ապահովել գնահատվող գույքի տեղագնման հնարավորություն:~~

1) գնահատման կազմակերպությանը կամ գնահատողին տրամադրել գնահատման օբյեկտի վերաբերյալ և գնահատման համար անհրաժեշտ իր տիրապետության ներքո գտնվող ամբողջական, հավաստի տեղեկատվություն և փաստաթղթեր, այդ թվում՝ գնահատվող օբյեկտի ֆիզիկական և տեխնիկական բնութագրեր, գնահատողի պահանջով ներկայացնել պարզաբանումներ, ինչպես նաև ապահովել գնահատվող գույքի տեղագնման հնարավորություն:

2) չխոչընդոտել գնահատման գործընթացը և չմիջամտել դրան.

3) պատշաճ կատարել իր պայմանագրային պարտավորությունները.

4) կրել Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված այլ պարտականություններ:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գնահատման հաշվետվության կապակցությամբ առաջացած ցանկացած անբարենպաստ հետևանքի համար պատասխանատվությունը կրում է բացառապես պատվիրատուն, բացառությամբ այն դեպքերի երբ պատվիրատուն ապացուցում է, որ պարտականությունների պատշաճ

կատարումն անհնարին է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով:

Հոդված 20. Գնահատման մասնագիտական որակավորման ստուգման կարգը, կազմակերպումն ու իրականացումը

1. Որակավորումը կազմակերպում և իրականացնում է լիազոր մարմինը՝ որակավորման քննությունների միջոցով:

2. Որակավորման քննություններն ընդունում է լիազոր մարմնի ստեղծած որակավորման հանձնաժողովը: Որակավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվում են լիազոր մարմնի երկու ներկայացուցիչ և գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություններից յուրաքանչյուրի առաջարկությամբ առնվազն երկու տարվա գնահատողի աշխատանքային փորձ ունեցող մեկական գնահատող՝ ռոտացիոն կարգով, առավելագույնը մեկ տարի ժամկետով: Որակավորման հանձնաժողովում գնահատող անդամների քանակը չպետք է պակաս լինի երեքից: Որակավորման հանձնաժողովում որպես հանձնաժողովի անդամ ընդգրկելու նպատակով գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների կողմից գնահատողներ չառաջարկվելու կամ առաջարկված գնահատողների քանակը երեքից պակաս լինելու դեպքում լիազոր մարմինն իր նախաձեռնությամբ հանձնաժողովում ընդգրկում է առնվազն երկու տարվա գնահատողի աշխատանքային փորձ ունեցող այլ գնահատողների:

~~3. Որակավորման քննություններին կարող են մասնակցել բարձրագույն կրթություն ունեցող ֆիզիկական անձինք:~~

~~3. Որակավորման քննությունները դասակարգվում են հետևյալ տեսակների՝~~

~~1) 3-րդ կարգի գնահատողի որակավորման քննություն, որին կարող են մասնակցել բարձրագույն կրթություն ունեցող անձինք.~~

~~2) 2-րդ կարգի գնահատողի որակավորման քննություն, որին կարող են մասնակցել բարձրագույն կրթություն ունեցող և գնահատման ոլորտում երկու տարվա աշխատանքային ստաժ ունեցող անձինք, ինչպես նաև 3-րդ կարգի գնահատողի որակավորում ունեցող և լիազոր մարմնի կողմից հաստատված վեցամսյա մասնագիտական դասընթացին մասնակցած անձինք.~~

~~3) 1-ին կարգի գնահատողի որակավորման քննություն, որին կարող են մասնակցել բարձրագույն կրթություն և գնահատման ոլորտում հինգ տարվա աշխատանքային ստաժ ունեցող անձինք, ինչպես նաև 2-րդ կարգի գնահատողի որակավորում ունեցող և լիազոր մարմնի կողմից հաստատված վեցամսյա մասնագիտական դասընթացին մասնակցած անձինք:~~

~~4. Որակավորման քննությունների անցկացման կարգը սահմանում է Կառավարությունը: Որակավորման քննությունների անցկացման կարգով սահմանվում են որակավորման քննության ժամկետները, քննությանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանց ներկայացման ժամկետները և~~

~~ձևերը, քննության ժամանակ առաջադրվող հարցերի և խնդիրների քանակը, քննությունների արդյունքների գնահատման կարգը, քննության անցկացման համար նախատեսված ժամանակը, տեխնիկական միջոցներից օգտվելու կարգը, որակավորման վկայական ստանալու համար անհրաժեշտ միավորների քանակը, քննության արդյունքների բողոքարկման կարգը, ինչպես նաև քննությունը պատշաճ անցկացնելուն ուղղված այլ դրույթներ:~~

4. Որակավորման քննություններին դիմելու և մասնակցելու պայմանները, որակավորման քննությունների մասնակիցներին ներկայացվող պահանջները և որակավորման քննությունների կարգը սահմանում է Կառավարությունը, որով սահմանվում են յուրաքանչյուր տեսակի որակավորման քննությանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանց ներկայացման ժամկետները և ձևերը, ինչպես նաև որակավորման քննություններին առաջադրվող հարցերի, խնդիրների և առաջադրանքների քանակը, քննությունների արդյունքների գնահատման կարգը, քննության անցկացման համար նախատեսված ժամանակը, տեխնիկական միջոցներից օգտվելու կարգը, որակավորման վկայական ստանալու համար անհրաժեշտ միավորների քանակը, քննության արդյունքների բողոքարկման կարգը, ինչպես նաև քննությունը պատշաճ անցկացնելուն ուղղված այլ դրույթներ:

5. Քննության հարցաշարերը, ~~առաջադրվող հարցերը~~ և խնդիրները նախապատրաստում է ~~որակավորման հանձնաժողովը, և լիազոր մարմինը, որը~~ հաստատում է լիազոր մարմնի ղեկավարը: Քննության հարցաշարերը, ~~առաջադրվող հարցերը~~ պետք է պարտադիր հրապարակվեն լիազոր մարմնի պաշտոնական կայքում ոչ ուշ, քան քննության անցկացման օրվանից 30 օր առաջ:

6. Գնահատողի որակավորման քննությունն իրականացվում է համակարգչի համակարգչային թեստավորման միջոցով: Մասնակիցն իրավունք ունի նախօրոք ծանոթանալու տեխնիկական միջոցներից օգտվելու կարգին և պայմաններին: Որակավորման քննության անցկացման օրվա, ժամի և տեղի մասին քննության մասնակիցները պատշաճ տեղեկացվում են քննությունից առնվազն հինգ աշխատանքային օր առաջ: Մասնակցի պահանջի դեպքում եռօրյա ժամկետում տրամադրվում է մասնակցի լրացրած հարցաթերթիկի թղթային տարբերակը՝ հաստատված լիազոր մարմնի կողմից:

7. Որակավորման քննությունն անցկացվում է դռնբաց: Քննության ընթացքը տեսաձայնագրվում է, ինչպես նաև կարող է առցանց հեռարձակվել քննության նկատմամբ շահագրգիռ անձանց նախաձեռնությամբ:

8. Քննության արդյունքների մասին քննության մասնակիցները պատշաճ տեղեկացվում են քննության ավարտից անմիջապես հետո:

9. Քննության դրական արդյունքներով լիազոր մարմինը որոշում է կայացնում հայտատուին համապատասխանաբար 3-րդ կարգի, 2-րդ կարգի կամ 1-ին կարգի գնահատողի որակավորման վկայական տրամադրելու վերաբերյալ:

(20-րդ հոդվածը խմբ. 02.10.24 ՀՕ-363-Ն)

(02.10.24 ՀՕ-363-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 20.1. Որակավորման վկայականների դասակարգումը

1. Որակավորման վկայականներն ըստ տեսակների դասակարգվում են՝ , — և գնահատողի որակավորման վկայականների:

2. գնահատողի որակավորման վկայական ունեցող գնահատողն (գնահատող) իրավասու է իրականացնել միայն բնակարանների և մարդատար ավտոմեքենաների գնահատում:

3. գնահատողի որակավորման վկայական ունեցող գնահատողն (գնահատող) իրավասու է իրականացնել բոլոր տեսակի գնահատման օբյեկտների գնահատում բացառությամբ սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված դեպքերի և նոր ստեղծվող (կառուցման ընթացքում գտնվող) անշարժ գույքի:

4. գնահատողի որակավորման վկայական ունեցող գնահատողն (գնահատող) իրավասու է իրականացնել ցանկացած տեսակի գնահատման օբյեկտի գնահատում:

Հոդված 20.1. Որակավորման վկայականների դասակարգումը

1. Որակավորման վկայականներն ըստ տեսակների դասակարգվում են՝ 3-րդ կարգի, 2-րդ կարգի և 1-ին կարգի գնահատողի որակավորման վկայականների:

2. 3-րդ կարգի գնահատողի որակավորման վկայական ունեցող գնահատողն (3-րդ կարգի գնահատող) իրավասու է իրականացնել միայն բնակարանների և մարդատար ավտոմեքենաների գնահատում, բացառությամբ սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված դեպքերի և նոր ստեղծվող (կառուցման ընթացքում գտնվող) անշարժ գույքի:

3. 2-րդ կարգի գնահատողի որակավորման վկայական ունեցող գնահատողն (2-րդ կարգի գնահատող) իրավասու է իրականացնել բոլոր տեսակի գնահատման օբյեկտների գնահատում, բացառությամբ սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված դեպքերի և նոր ստեղծվող (կառուցման ընթացքում գտնվող) անշարժ գույքի:

4. 1-ին կարգի գնահատողի որակավորման վկայական ունեցող գնահատողն (1-ին կարգի գնահատող) իրավասու է իրականացնել ցանկացած տեսակի գնահատման օբյեկտի գնահատում:

Հոդված 22.— Վկայականի գործողության դադարեցումը

1. Վկայականի գործողությունը դադարեցվում է՝

1) վկայական ստանալու համար ներկայացված փաստաթղթերում կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն հայտնաբերելու դեպքում.

2) երեւ առկա է գնահատողին անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած վճիռ կամ դատավճիռ.

3) գնահատողի մահվան կամ նրան մահացած ճանաչելու մասին դատարանի վճիռն ուժի մեջ մտնելու դեպքում.

4) գնահատողի դիմումի համաձայն:

5) սույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմանափակումը խախտելու դեպքում:

6) եթե գնահատողը մեկ տարվա ընթացքում իր կազմած 10 և ավելի գնահատման հաշվետվություններում սույն օրենքով, գնահատման ստանդարտներով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված պահանջների և պայմանների խախտում է կատարել: Սույն կետով նախատեսված հիմքով որակավորման վկայականի գործողության դադարեցման դեպքում անձն իրավունք չունի որակավորման նոր վկայական ստանալու համար դիմելու վկայականի գործողությունը դադարեցվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

7) եթե գնահատողը մեկ տարվա ընթացքում իր կազմած հինգ և ավելի գնահատման հաշվետվություններում սույն օրենքով, գնահատման ստանդարտներով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված պահանջների և պայմանների՝ արժեքի վրա ազդող խախտում է կատարել: Սույն կետով նախատեսված հիմքերով որակավորման վկայականի գործողության դադարեցման դեպքում անձն իրավունք չունի որակավորման նոր վկայական ստանալու համար դիմելու վկայականի գործողությունը դադարեցվելուց հետո՝ երկու տարվա ընթացքում:

8) որակավորման վկայականի ժամկետը լրանալու դեպքում:

9) սույն օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որակավորման հանձնաժողովի կամ 23-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված մասնագիտական հանձնաժողովի նիստերին երկու անգամ անհարգելի պատճառով ներկայություն չապահովելու դեպքում: Որակավորման և մասնագիտական հանձնաժողովների նիստերին ներկայություն չապահովելը համարվում է հարգելի, եթե գնահատողը հիմնավորում է, որ գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, զինվորական ծառայության մեջ, ստացիոնար բուժման մեջ, ինչպես նաև համապատասխան հանձնաժողովի նիստերին ներկայությունը չի կարողացել ապահովել իրենից անկախ այլ անհաղթահարելի պատճառներով:

2. Որակավորման վկայականի գործողությունը դադարեցվում է վկայականն ուժը կորցրած ճանաչելու միջոցով:

3. Եթե միաժամանակ առկա են վկայականի գործողության դադարեցման՝ սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված հիմքերը, ապա վկայականի գործողությունը դադարեցվում է սույն հոդվածի 7-րդ կետով նախատեսված հիմքով:

4. Սույն հոդվածի 1-ի մասի 1-ին, 4-7-րդ կետերով նախատեսված հիմքերով վկայականի գործողությունը դադարեցվում է մասնագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա կայացված լիազոր մարմնի որոշմամբ և ենթակա է անհապաղ կատարման: Սույն մասով սահմանված հիմքերով վկայականի գործողությունը համարվում է դադարեցված լիազոր մարմնի որոշման օրվան հաջորդող օրվանից:

5. Վկայականի ուժը կորցրած ճանաչելու մասին լիազոր մարմնի որոշումը կարող է օրենքով սահմանված ժամկետում բողոքարկվել դատական կարգով: Բողոքարկումը չի կասեցնում վարչական ակտի գործողությունը:

6. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով որակավորման վկայականի գործողությունը համարվում է դադարեցված գնահատողին անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու վերաբերյալ վճիռը կամ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից:

7. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքով որակավորման վկայականի գործողությունը համարվում է դադարեցված գնահատողի մահվան կամ նրան մահացած ճանաչելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից:

8. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով որակավորման վկայականի գործողությունը համարվում է դադարեցված լիազոր մարմնի կողմից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշում կայացնելուն հաջորդող օրվանից, բացառությամբ եթե դիմումատուի գույքի գնահատման գործունեության վերաբերյալ լիազոր մարմնում հարուցված է վարչական վարույթ: Վարչական վարույթի առկայության դեպքում վկայականի գործողությունը դադարեցված է համարվում վարչական վարույթի ավարտման օրը, որոշում կայացնելու պահից:

9. Լիազոր մարմնի կողմից վկայականի գործողությունը դադարեցվելու մասին որոշումն այն կայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով հանձնվում կամ ուղարկվում է գնահատողին, իսկ որոշման պատճենը՝ գնահատման կազմակերպություն:

10. Վկայականի գործողությունը դադարեցնելու հիմքերի բացակայության դեպքում մասնագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա լիազոր մարմնի որոշմամբ վարչական վարույթը կարճվում է:

(22-րդ հոդվածը լրաց. 02.10.24 ՀՕ-363-Ն)

(02.10.24 ՀՕ-363-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 22. Գնահատման գործունեություն իրականացելու համար տրամադրվող միավորները և դրանց նվազեցման կարգը, վկայականի գործողության կասեցման և դադարեցման հիմքերը

1. Գնահատողի որակավորման վկայական ստացած անձին որակավորման վկայական տրամադրելու օրվանից մեկ տարի ժամկետով գնահատման գործունեություն իրականացելու համար տրվում է 20 միավոր: Գնահատողին յուրաքանչյուր հաջորդ տարի տրվում է 20 միավոր, ընդ որում՝ նախորդ տարվա միավորների մնացորդը չի փոխանցվում հաջորդ տարի:

2. Սույն հոդվածով սահմանված խախտումների համար համապատասխանաբար կիրառվում են 1, 3 կամ 20 միավոր նվազեցումները:

3. 1 միավոր նվազեցումը կիրառվում է, եթե գնահատողն իր կազմած գնահատման հաշվետվությունում թույլ է տվել տեխնիկական կամ ձևաբանական սխալ կամ վրիպակ, որը չի հանգեցնում կազմած գնահատման հաշվետվության անարժանահավատության և չի ազդում գնահատված արժեքի վրա: Ընդ որում, յուրաքանչյուր գնահատման հաշվետվության ուսումնասիրության ընթացքում սույն մասով սահմանված յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1-ական միավոր:

4. 3 միավոր նվազեցումը կիրառվում է, եթե գնահատողն իր կազմած գնահատման հաշվետվությունում թույլ է տվել մեթոդաբանական կամ վերլուծական այնպիսի խախտում, որը չի ազդել գնահատված արժեքի վրա: Սույն մասով նախատեսված հիմքով յուրաքանչյուր խախտման համար հանվում է 3-ական միավոր, ընդ որում, յուրաքանչյուր գնահատման հաշվետվության ուսումնասիրության ընթացքում յուրաքանչյուր սխալի համար հանվում է 3-ական միավոր:

5. 20 միավոր նվազեցումը կատարվում է, եթե գնահատողը իր կազմած գնահատման հաշվետվությունում թույլ է տվել գնահատման արժեքի վրա ազդող սխալ կամ գնահատումն իրականացրել է շահերի բախման իրավիճակում:

6. Վկայականի գործողության կասեցման հիմքերն են՝

1) մեկ օրացուցային տարվա ընթացքում 7 բալ նվազեցումը.
2) վկայականի գործողությունը կասեցնելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը.

3) պետական ծառայության, համայնքային ծառայության մեջ լինելու ողջ ժամկետի ընթացքում, ինչպես նաև հանրային պաշտոնում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում՝ իր լիազորությունների ժամկետով.

4) գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության անդամավճարը երեք ամիս անընդմեջ չվճարելը: Սույն կետի հիմքով որակավորման վկայականը համարվում է կասեցված գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության կողմից լիազոր մարմին ներկայացված կասեցման դիմումի և անդամավճարը վճարված չլինելու մասին տեղեկանքի հիման վրա մինչև վճարումներն ամբողջությամբ կատարելը.

5) գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությանը մեկ ամիս անընդմեջ չանդամակցելը մինչև անդամակցելը: Սույն կետի հիմքով որակավորման վկայականը կասեցվում է գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության կողմից լիազոր մարմին ներկայացված կասեցման դիմումի և անդամակցությունը դադարեցված լինելը հավաստող տեղեկանքի հիման վրա.

6) սույն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի «գ» և «դ» ենթակետերով սահմանված կարգով նախատեսված տեղեկատվությունը լիազոր մարմինն ոչ ամբողջական ներկայացնելը կամ չներկայացնելը.,

7. Սույն հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով վկայականի գործողությունը լիազոր մարմնի ղեկավարի հրամանով կասեցվում է նվազագույնը՝ մեկ ամիս ժամկետով, իսկ առավելագույնը՝ երկու տարի ժամկետով՝ սույն հոդվածի 20-րդ մասով սահմանված կարգով:

8. Սույն հոդվածի 6-րդ մասի 2-րդ և 6-րդ կետերով նախատեսված հիմքով վկայականի գործողությունը լիազոր մարմնի ղեկավարի հրամանով կասեցվում է անորոշ ժամկետով՝ մինչև հիմքերի պատշաճ վերացումը:

9. Վկայականի գործողությունը կասեցնելու մասին լիազոր մարմնի ղեկավարի հրամանը (այն ստորագրելու լիազորություն ունեցող անձի էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված կամ տեսաներաձված տարբերակը) այն կայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ուղարկվում է համապատասխան որակավորված անձին՝ Կառավարության սահմանած կարգով Հաշվառման ծրագրի միջոցով: Որակավորված անձը համարվում է հրամանի մասին պատշաճ ծանուցված այն Հաշվառման ծրագրում տեղադրելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Հրամանն ուժի մեջ է մտնում Հաշվառման ծրագրում տեղադրելու օրվան հաջորդող չորրորդ աշխատանքային օրվանից: Որակավորված անձը պարտավոր է ինքնուրույն ձեռնարկել միջոցներ Հաշվառման ծրագրից տեղեկություններ ստանալու համար և լիազոր մարմնին անհապաղ գրավոր տեղեկացնել Հաշվառման ծրագրից նման տեղեկություններն իրենից անկախ պատճառներով ստանալու անհնարինության մասին: Նման տեղեկություն ստանալու դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմինը համապատասխան հրամանը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկում է որակավորված անձին: Վկայականի գործողության կասեցման մասին լիազոր մարմնի ղեկավարի հրամանն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը լիազոր մարմնի պաշտոնական կայքում կատարվում է վկայականի գործողության կասեցման մասին նշում:

10. Վկայականի գործողության կասեցման ընթացքում գնահատողն իրավունք չունի իրականացնելու գնահատման գործունեություն, բացառությամբ նախքան վկայականի կասեցումը կնքված և գործող պայմանագրերի հիման վրա սույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետով սահմանված դեպքերում պատվիրատուի կողմից պայմանագրով ստանձնած պարտականությունները կատարելու պահանջի հիմքով կատարված գնահատման գործունեության:

11. Վկայականի գործողության դադարեցման հիմքերն են՝

1) մեկ օրացուցային տարվա ընթացքում կամ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված խախտման հիմքով 20 բալ նվազեցումը.

2) վկայական ստանալու համար ներկայացված փաստաթղթերում հետագայում հայտնաբերված կեղծ կամ խեղաթյուրված տվյալների առկայությունը.

3) որակավորված անձին անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու կամ գնահատման գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը.

4) գնահատողի մահվան կամ նրան մահացած ճանաչելու մասին դատական ակտն ուժի մեջ մտնելը.

5) վկայականի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որակավորված անձի դիմումը.

6) սույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմանափակումը խախտելը.

7) վկայականի գործողության կասեցման ժամկետում սույն օրենքի իմաստով գնահատման գործունեություն իրականացնելը.

8) որակավորման վկայականի սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետները լրանալը:

12. Որակավորման վկայականի գործողությունը դադարեցվում է վկայականն ուժը կորցրած ճանաչելու միջոցով:

13. Վկայականի գործողությունը լիազոր մարմնի ղեկավարի՝ վկայականն ուժը կորցրած ճանաչելու մասին հրամանով դադարեցնում է լիազոր մարմինը՝ մասնագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

14. Վկայականն ուժը կորցրած ճանաչելու մասին լիազոր մարմնի ղեկավարի հրամանը (այն ստորագրելու լիազորություն ունեցող անձի էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված կամ տեսաներաժված տարբերակը) այն կայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ուղարկվում է համապատասխան որակավորված անձին՝ Հաշվառման ծրագրի միջոցով: Որակավորված անձը համարվում է հրամանի մասին պատշաճ ծանուցված այն Հաշվառման ծրագրում տեղադրելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Հրամանն ուժի մեջ է մտնում Հաշվառման ծրագրում տեղադրելու օրվան հաջորդող չորրորդ աշխատանքային օրվանից: Որակավորված անձը պարտավոր է ինքնուրույն ձեռնարկել միջոցներ Հաշվառման ծրագրից տեղեկություններ ստանալու համար և լիազոր մարմնին անհապաղ գրավոր տեղեկացնել Հաշվառման ծրագրից նման տեղեկություններն իրենից անկախ պատճառներով ստանալու անհնարինության մասին: Նման տեղեկություն ստանալու դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմինը համապատասխան հրամանը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկում է որակավորված անձին: Վկայականն ուժը կորցրած ճանաչելու մասին լիազոր մարմնի ղեկավարի հրամանն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը լիազոր մարմնի պաշտոնական կայքում կատարվում է վկայականի գործողության դադարեցման մասին նշում:

15. Վկայականի գործողության դադարեցումից հետո նոր վկայական ստանալու համար անձը Կառավարության սահմանած կարգով կարող է դիմել 3-րդ կարգի գնահատողի որակավորման քննությանը մասնակցելու համար՝ ցանկացած ժամանակ:

16. Վկայականն ուժը կորցրած ճանաչելու կամ գործողությունը կասեցնելու մասին լիազոր մարմնի հրամանները ենթակա են անհապաղ կատարման և դրանց դատական կարգով բողոքարկումը չի կասեցնում վիճարկվող հրամանի կատարումը:

17. Վկայականը կասեցնելու և դադարեցնելու մասին լիազոր մարմնի հրամանի պատճենը Հաշվառման ծրագրի միջոցով ուղարկվում է նաև գնահատման կազմակերպությանը:

18. Սույն հոդվածով սահմանված հիմքերով 6 միավոր և ավել նվազեցնելու դեպքում գնահատողը պարտավոր է անցնել մասնագիտական վերապատրաստում: Յուրաքանչյուր նվազեցված միավորի դիմաց գնահատողը պարտավոր է անցնել մեկական ժամ մասնագիտական վերապատրաստում:

19. Մասնագիտական վերապատրաստումն իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների, հաշվառված գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների, անհատական դասընթացների, ինչպես նաև միջազգային դասընթացներին մասնակցությամբ, որոնց արդյունքները, դասընթացների ժամաքանակը և ժամկետները պետք է ամրագրված լինեն դասընթացը կազմակերպողի հավաստագրով: Մասնագիտական վերապատրաստման նվազագույն պահանջները սահմանում է լիազոր մարմինը:

20. Համապատասխան ժամաքանակով մասնագիտական վերապատրաստումը հավաստող հավաստագրի ներկայացման դեպքում լիազոր մարմնի որոշմամբ գնահատողի որակավորման վկայականի կասեցումը վերացվում է: Ընդ որում, մասնագիտական վերապատրաստման դասընթացների մասնակցությունը հավաստող հավաստագրի տրամադրման ժամկետը կարող է նաև նախորդել վկայականը կասեցնելու կամ միավորները նվազեցնելու ամսաթվին, բայց ոչ ավել քան այդ ամսաթվին նախորդող մեկ տարի ժամկետը: Գնահատողի կողմից մասնագիտական վերապատրաստման դասընթացների մասնակցությունը հավաստող հավաստագիրը լիազոր մարմին կարող է ներկայացվել վկայականի կասեցման հրամանն ուժի մեջ մտնելուց մեկ ամիս հետո՝ մինչև երկու տարին լրանալը: Վկայականը կասեցնելու մասին լիազոր մարմնի հրամանն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում սույն հոդվածով սահմանված կարգով մասնագիտական վերապատրաստման դասընթացների մասնակցությունը հավաստող հավաստագիրը լիազոր մարմինին չներկայացնելու դեպքում վկայականի գործողությունը դադարեցվում օրենքի ուժով:

Հոդված 23. Գնահատման գործունեության ոլորտը կարգավորող և վերահսկող, որակավորում իրականացնող լիազոր մարմինը

1. Գնահատման գործունեության ոլորտը կարգավորող և վերահսկող, ֆիզիկական անձանց գնահատման մասնագիտական որակավորում իրականացնող լիազոր մարմինը Կադաստրի կոմիտեն է:

2. Լիազոր մարմինը՝

1) ստեղծում է մասնագիտական հանձնաժողով և հաստատում դրա անհատական կազմը: Մասնագիտական հանձնաժողովի կազմում ընդգրկվում են լիազոր մարմնի երկու ներկայացուցիչ և գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություններից յուրաքանչյուրի առաջարկությամբ առնվազն երկու տարվա գնահատողի աշխատանքային փորձ ունեցող հինգ գնահատող՝ ռոտացիոն կարգով,

առավելագույնը մեկ տարի ժամկետով: Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություններից յուրաքանչյուրը մասնագիտական հանձնաժողովում ընդգրկելու նպատակով պարտավոր է առաջարկել մեկական գնահատողի թեկնածություն, որոնք սույն մասի պահանջները բավարարելու դեպքում ընդգրկվում են մասնագիտական հանձնաժողովում: Մասնագիտական հանձնաժողովում որպես հանձնաժողովի անդամ ընդգրկելու նպատակով գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների կողմից գնահատողներ չառաջարկվելու կամ առաջարկված գնահատողների քանակը հինգից պակաս լինելու կամ գնահատողներին սույն մասով ներկայացված պահանջները չբավարարելու դեպքում լիազոր մարմինն իր նախաձեռնությամբ հանձնաժողովում ընդգրկում է առնվազն երկու տարվա գնահատողի աշխատանքային փորձ ունեցող այլ գնահատողների: Մասնագիտական հանձնաժողովի կանոնադրությունը և գնահատման հաշվետվությունների ուսումնասիրությունների իրականացման կարգը սահմանում է Կառավարությունը.

~~2) հաստատում է գնահատողների կազմած գնահատման հաշվետվությունների մասնագիտական ուսումնասիրությունների իրականացման տարեկան ժամանակացույցը: Ընդ որում, միևնույն գնահատողը կարող է ընդգրկվել մասնագիտական ուսումնասիրությունների իրականացման տարեկան ժամանակացույցում ոչ ավելի հաճախ, քան երկու տարին մեկ, բացառությամբ մասնագիտական հանձնաժողովի պատճառաբանված առաջարկի հիման վրա՝ լիազոր մարմնի ղեկավարի հրամանով:~~

2) ղեկավարի կողմից ընդունված իրավական ակտով, վաղաժամկետ դադարեցնում է մասնագիտական հանձնաժողովի գնահատող անդամի անդամակցությունը: Մասնագիտական հանձնաժողովի գնահատող անդամի անդամակցությունը վաղաժամկետ դադարում է գնահատողի որակավորման վկայականի գործողությունը դադարեցնելով կամ կասեցնելով, գնահատողին հաշվառումից հանելով, մասնագիտական հանձնաժողովի նիստերին երկու և ավելի անգամ անհարգելի բացակայելու դեպքերում. .

3) հաստատում է որակավորման քննությունների հարցաշարերը, առաջադրվող հարցերը և խնդիրները.

4) հաստատում է որակավորման վկայականի ձևը.

5) կազմակերպում և անցկացնում է գնահատողների մասնագիտական որակավորման քննությունները.

6) սույն օրենքի 20-րդ հոդվածի 9-րդ մասով, 21-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ, 6-րդ մասերով, 22-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերը հայտնի դառնալու օրվան հաջորդող երեք օրվա ընթացքում ընդունում է որոշում որակավորման վկայականի կամ կրկնօրինակի տրամադրման, վերաձևակերպման և գործողության դադարեցման վերաբերյալ: Եթե նշված ժամկետում որոշում չի կայացնում, ապա որոշումը համարվում է կայացված.

7) մասնագիտական հանձնաժողովի միջոցով իրականացնում է հսկողություն գնահատման կազմակերպությունների և գնահատողների կողմից սույն օրենքի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգերի, նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ, այդ թվում՝

~~ա. գնահատման սուբյեկտների և շահառուների դիմումների հիման վրա, լիազոր մարմնի նախաձեռնությամբ կամ լիազոր մարմնի հաստատած՝ ուսումնասիրությունների իրականացման տարեկան ժամանակացույցի համաձայն կատարում է գնահատման հաշվետվությունների մասնագիտական ուսումնասիրություններ, որոնց արդյունքում կազմվում են համապատասխան եզրակացություններ, այդ թվում՝ գնահատված օբյեկտի արժեքի արժանահավատության վերաբերյալ, ինչպես նաև տրամադրում է եզրակացություն գնահատման հաշվետվության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և գնահատման ստանդարտներին համապատասխանության վերաբերյալ: Լիազոր մարմնի նախաձեռնությամբ մասնագիտական ուսումնասիրություններ իրականացնելու դեպքերը սահմանվում են գնահատման հաշվետվությունների ուսումնասիրությունների իրականացման կարգով:~~

~~ա. գնահատման սուբյեկտների կամ շահառուների դիմումների հիման վրա կամ լիազոր մարմնի նախաձեռնությամբ կատարում է գնահատման հաշվետվությունների մասնագիտական ուսումնասիրություններ՝ մասնագիտական հանձնաժողովի միջոցով, այդ թվում՝ գնահատված օբյեկտի արժեքի արժանահավատության, ինչպես նաև գնահատման հաշվետվության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և գնահատման ստանդարտներին համապատասխանության վերաբերյալ, որոնք եզրափակվում են մասնագիտական հանձնաժողովի կողմից տրված եզրակացության հիման վրա՝ լիազոր մարմնի՝ վարչական վարույթը եզրափակելու մասին վարչական ակտ կայացնելով: Գնահատման հաշվետվությունների ուսումնասիրության դեպքերը և կարգը սահմանում է Կառավարությունը: Մասնագիտական հանձնաժողովի կողմից ուսումնասիրության ենթակա չեն գնահատման հաշվետվությունները, որոնք դատարաններում քննության առարկա են կամ դատական քննության ընթացքում ներկայացվել են որպես ապացույց: Լիազոր մարմնի նախաձեռնությամբ մասնագիտական ուսումնասիրություններ իրականացնելու դեպքերը սահմանվում են գնահատման հաշվետվությունների ուսումնասիրությունների իրականացման կարգով:~~

բ. գնահատման հաշվետվություններում անհամապատասխանություն արձանագրելու դեպքում գնահատման գործունեության սուբյեկտներին և շահառուներին երեք աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով ուղարկում կամ հանձնում է տվյալ գնահատման հաշվետվության վերաբերյալ մասնագիտական եզրակացության պատճենը:

գ. գնահատողներից կամ գնահատման կազմակերպություններից պահանջում է ներկայացնել գնահատման հաշվետվությունները, ինչպես նաև վերահսկողություն իրականացնելու համար լիազոր մարմնի պահանջած՝ գնահատման

ստանդարտներով սահմանված գնահատման աշխատանքի ընթացքում ձեռք բերված հիմնական, նախնական տվյալները, բոլոր հաշվարկները, հետազոտության և վերլուծության արդյունքները, որոնց միջոցով կայացվել է արժեքի վերաբերյալ վերջնական եզրակացությունը: Պահանջված տեղեկատվությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու անհնարինության և նոր ժամկետ հայցելու վերաբերյալ գրավոր դիմումի հիման վրա լիազոր մարմինը, կատարման անհնարինությունը հաստատվելու դեպքում, երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է փաստաթղթերի ներկայացման նոր ժամկետ տրամադրելու մասին.

դ. գնահատման հաշվետվությունները, ինչպես նաև սույն կետի «գ» ենթակետում նշված տեղեկատվությունները ոչ ամբողջական ներկայացնելու դեպքում, գնահատողներին կամ գնահատման կազմակերպություններին տրամադրվում է երեք աշխատանքային օր՝ ճշգրտված տեղեկատվությունը կրկին ներկայացնելու համար.

8) գնահատման կազմակերպության ղեկավարին և գնահատողին տրամադրում է Հաշվառման ծրագիր մուտք գործելու մուտքանուն և գաղտնաբառ.

9) գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների առաջարկությամբ հաստատում է վերապատրաստման դասընթացների ծրագիրը.

10) լիազոր մարմնի պաշտոնական կայքում հրապարակում է գնահատողի որակավորում ունեցող անձանց, որակավորման վկայականի գործողությունը դադարեցված անձանց (ներառյալ վկայականի գործողության դադարեցման իրավական հիմքը և գնահատման կազմակերպության անվանումը), լիազոր մարմնի հաշվառած գնահատողների, գնահատման կազմակերպությունների և գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների անվանացանկերը, իսկ կոնտակտային տվյալները՝ նրանց համաձայնությամբ: Հրապարակված անվանացանկերը փոփոխվում են այդ փոփոխության իրավական հիմքի առաջացումից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում.

11) իրականացնում է գնահատմանն առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթներ:

(23-րդ հոդվածը խմբ. 02.10.24 ՀՕ-363-Ն)

(02.10.24 ՀՕ-363-Ն օրենքն ունի անցումային դրույթ)